փողոցները, հրապարակները․ «Եւ ոչ բաւեալ ընդունել զամենեսեան տանն Աստուծոյ լընուին արտաքոյ սրահք եկեղեցւոյն եւ փողոցք եւ ամենայն տեղիք հրապարակացն շուրջանակի։»*



Պատկ․ 25

### Է․

Գալով պատկերագրութեան մեր հնագոյն եկեղեցիներից ոչ մէկի վերայ չէ մնացել այն չափով պատկերաքանդակ, ինչպէս մնացել է Օձունի տաճարի վերայ, ի նկատի ունենալով նաեւ գերեզմանական յուշարձանը, որի երկու սիւների երեսներն ու կողերը զարդարուած են պատկերներով եւ զարդերով, իսկ իր ճարտարապետական առանձնայատկութիւններով անբաժան տաճարից, նիւթով, կառուցուածքով եւ քանդակներով։ Այդ պատկերաքանդակներն ու զարդաքանդակները մի կողմից կրկնուած ենք տեսնում մեր ամենահին տաճարների վերայ, որպիսին

*Ղազար Փարպեցի․ եր․ 178․ էջմ․–ի հրտ․։